

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

(Գ. Կիրակէ Աղուեացից)

ԱՆԱՌ-ԱԿ ՈՐԳԻՆ

«Եւ եկեալ ի միտս իւր՝ ասէ...»

Ղուկ. ԺԵ. 17

Անկումըս հա՛յր շընորհքներուդ բարձունքէն,
 Որուն կը զգամ դեռ պըտոյտքը հոգեցունց,
 Գիտակցութեան ասղնտուքով մ'ապաքէն՝
 Սիրտս ծակծըկեց, դառն արցունքով զիս լացուց,
 Անառա՛կ Որդին:

Զըրկումըս, հա՛յր, Քու լիութեանդ սեղանէդ՝
 Կը զգամ հիմակ ես քաղցի գելումներուն տակ,
 Ծամծըմելու եղջիւր մ'անգամ չեն տար գէթ,
 Արցունքի-ծովի մ'անդունդն ինկաւ անյատակ՝
 Անառա՛կ Որդին:

Մերկացումս, հա՛յր, պերճանքներէս ծիրանեփառ՝
 Ամօթի ցուրտ մերկութեան մէջ զիս ձըգեց,
 Ա՛լ մարդկային դէմք մը նայիլ չեմ կրնար,
 Աղի արցունքն իր կուլ կու տայ տխրահեծ
 Անառա՛կ Որդին:

Լըքումս, հա՛յր, ընկերներէս բախտակից՝
 Խո՛ր ըզգացուց յարզը սիրող Քու սրտին,
 Հիմակ գիտէ ի՞նչ է ցաւիլ, լաց, կսկիծ,
 Հոգեչարչար հառաչներուն մէջ յետին
 Անառա՛կ Որդին:

Վէրքերս հա՛յր, սիրած, պաշտած աշխարհքէս՝
 Թարախներու նեխումով սիրտս պղծեցին,
 Որդ, փտածութիւն մարմինս առին կէս առ կէս,
 Ու մարմնացում մ'է պժգանքի ինքնածին
 Անառա՛կ Որդին:

Տռփանքներս, հա՛յր, իբր հրաբուխ անդուլ,
 Գլխուս վըրայ պատժոյ հուրը թափեցին,
 Սիրտըս կը մըրկի հրդեհումով մ'ահեղ, խուլ,
 Հառաչքիս ծուխը կը ծառանայ ա՛լ վերջին.
 Անառա՛կ Որդին:

Արցունքըս, հա՛յր, կ'աղբերանայ հոգիէս,
 Ապաշաւի հսկումներ սոսկ ունիմ ալ,
 Երկընքի դէմ մեղա՛յ, մեղա՛յ նաեւ Քեզ,
 Զէ արժանի նոյն իսկ ծառան Քու ըլլալ
 Անառա՛կ Որդին:

* * *

- Անկումիդ տեղ, սիրո՛ւն Որդեակ, կայ պատրաստ
 Որդիութեան հինն աթոռ,
 Զրկումիդ տեղ կեանք մ'առատ, կուշտ, բարեբաստ
 Ու շընորհքներ նորանոր:

Մերկացումիդ տեղ, Որդեակ իմ, կայ պահուած
 Պատմուճանդ քու նախկին,
 Լըքումիդ տեղ գգուանքներս թեւաբաց,
 Սէր՝ փոխարէն քու զիղջին:

Վէրքերուդ տեղ, սիրո՛ւն Որդեակ, մատանին
 Ականակուռ, թանկագին,
 Տոփանքներուդ մրրկումներ ալ պիտ' անցնին
 Համբոյրներովս կաթոգին:

Արցունքիդ տեղ, սիրո՛ւն Որդեակ եւ վըշտիդ,
 Գորով, գութ, սէր, եւ ժըպիտ:

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Տարսոն

